

Ընդունելության պայմանները

Ասպիրանտուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ այն քաղաքացիները, որոնք ստացել են մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

Նախկինում ասպիրանտուրան ավարտած կամ ասպիրանտուրայից անհարգելի պատճառով ազատված անձինք կրկին պետ. պատվերով ասպիրանտուրա ընդունվել չեն կարող:

Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը պետք է հասցեագրել ՀՀ ԳԱԱ Գիտակրթական կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանին:

Դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

Երկու օրինակից.

1. Բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների և դրանց հավելվածների պատճենները (Եթե դրանք դեռևս ստացված չեն, ապա համապատասխան ակադեմիական տեղեկանք բուհից), օտարերկրա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության **համարժեքության** մասին
2. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
3. Ինքնակենսագրություն
4. Երեք լուսանկար (3x4 չափսի), որից երկուսը փակցված անձնական թերթիկներին,
5. **Օտար լեզու և Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ** առարկաների ատեստավորման վկայականները կամ դրանց համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ)
6. Ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում (մեկ օրինակ)
7. Քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում)
8. Անձնագրի և զինվորական գրքույկի պատճենները
7. Երկու թղթապանակ (կապովի):

Անձնագրի, զինվորական գրքույկի, դիպլոմների բնօրինակները ներկայացնել անձամբ:

Ասպիրանտուրա ընդունվողը հանձնում է քննություն մասնագիտությունից, որի հանձնելու կարգի և ծրագրի մասին անհրաժեշտ է տեղեկանալ ՀՀ ԳԱԱ այն գիտական կազմակերպությունում, որի գծով տրված է հայտարարություն կամ պաշտոնական կայքէջից:

Մասնագիտական առարկայի քննությունից «բավարար» գնահատական ստացած դիմորդը զրկվում է ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից:

Քննության վերահանձնում չի թույլատրվում:

Մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է տվյալ ուսումնական տարվա տվյալ կազմակերպության ընդունելության քննության ընթացքում:

Ղիմորդր քննությանը ներկայանում է անձր հաստատող փաստաթղթով:

Օտար լեզու և Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկայից սահմանված են հետևյալ անցումային շեմերը՝

Անգլերեն լեզու՝ «TOEFL»(iBT) – 46 միավոր և «IELTS» 5.5 միավոր:

Ֆրանսերեն լեզու՝ «TCF» - 200 միավոր:

Գերմաներեն լեզու՝ «on DaF» - 60 միավոր:

Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ՝ 25 միավոր:

Մրցույթի անցկացում

Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում՝

ա/ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ընդհանուր միջին գնահատականը,

բ/ բախկալավրի և մագիստրոսի դիպլոմի ընդհանուր միջին գնահատականի գումարը,

գ/ հրատարակված գիտական աշխատանքների քանակը

դ/ միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները, կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային
կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանին
_____ -ից

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ թույլ տալ մասնակցելու (առկա, հեռակա, վճարովի) ասպի-
նշել ընտրած ուսուցման ծնը

րանտուրայի ընդունելության քննությանը -----
----- մասնագիտության
գծով:

ստորագրություն

Ամսաթիվ ամիս, տարի